(նաեւ նոյնին **Բողոք**) 1861, **Զանազանութիւն հինգ դարուց** (1862), Մեծն Ներսես (ողբերգ) 1863, Եղիշէ, Պատասխանի ընդդէմ տետրակի Հ. Ռ. Պուչէկի (1865), **Օրացոյց** (1866-1912), **Սիոն** (ամսաթերթ՝ յաջորդական խմբագրութեամբ Տիգրան Հ. Թ. Սաւալանեանցի, Մելքիսեդեկ Վարդապետ Մուրատեանի, Կիւրեղ Վարդապետ Սրապեանի և Գաբրիէլ սարկաւագ Խապայեանի) 1866-77, Աղօթագիրք, Գործ ոսկեղինիկ (Սամուէլ Ռաբբի), Ճառք դպրոցականք, **Պատմ. Հայոց** (Յովհ. Կաթող.), Նոր Կտակարան, Պատմ. Ս. Գրոց (Ե. Տնտեսեան), Տեսչութիւն հովուական, Question sur la propriété du couvent de St. Jacques à Jérusalem (1867). Ճաշու Աւետ., Նոր նախագիտելիք, **Դեռուբեա Եղեսացի**, Ճարտասանութիւն (Ե. Մուրատեան), Նարեկ (միջակ տառերով, իսկ 97 ին՝ մանրատառ.), Սաղմոս (5 տարբեր անգամներ), Գործոց (երկիցս), Տօնացոյց (1868), Անուրջ ի Սիոն, Թուագիտութիւն, Կենսագր. Փասկալայ, **Մատթէոս Ուռհայեցի**. Տրամաբանութիւն, Քերականութ. Գաղղ. (1869), **Թանգարան խրատու**, Հենրիկոս և Մարիամ, Հրահանգ սիրոյ, **Պատմ. Թաթարաց**, Քերականութիւն Հայ., Քրիստոնէական (1870), **Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշստան** (նաև ֆրնս.ը), **Ընդհանրական** (Ն. Շնորհալի), **Խնդիր Ս. Տեղեաց**, Կարգադրութիւն առողջութեան, **Կրթարան աւետ. բանից** (1871), Ազնէս, Մենտոր մանկանց, **Գագիկ** վերջին արքայ Հայոց Բագրատունի, Երկու խօսք (Մ. Վ. Մարկոսեան), **Ուղեցոյց Ս. Տեղեաց** (աշխ.), **Պատմ. Հայաստանեայց** (Մ. Վ. Մուրատեանց), Քերական (1872), Ամեն մարդոց բարեկամ, Համառօտութիւն քրիստ. ուսման (Պ. Շանշեանց), Ճաշոց, **Պատմ. Լէնկ Թիմուրայ** (հեղ. Արապշահ), Խորհրդատետր (1873), Աշխարհագրութիւն, Բանախօսութիւն աշակերտուհեաց մէջ, Ուխտ հայրենասիրի (Մ. Վ. Մուրատեանց), Ուսումն պարտուց (Պ. Շաշեանց) 1874, Աւետարան (երկիցս, նաև Իւղարերից՝ 1900), Բարոյ. պատմութիւններ, Մարգարէական յարակցութիւն, Սիրուն զբօսարան, **Բան ի յայտնութիւն** Տեառն և յօծումն Լեւոնի Գ. (Վահրամ վրդ., առեմադպիր Լեւոնի) 1875, Տիեզերագրութիւն (1876, Բ. տիպ՝ 1884), Պատմ. Հին Կտակարանի (1878, Բ. տիպ՝ 1879, Գ. տիպ՝ 1881, Դ. տիպ՝ 1896), Բովանդակութիւն ազգ. սեպհականութեանց (1880, Բ. տիպ՝ 1890), Նոր թուագիտութիւն (2 հատոր) 1880-1, Հեգերէն, **Սանդուխտ** (ողբերգ. Թ. Թերզեանի) 1881, Գիրք խօսակցութեան, Պատմ. Նոր Կտակարանի, Քերական Հայ.-գաղ. (1882), Արձագանգ ողբերգութեան ի չարչարանս... Յս.ի (1884), Գիրք ընութեանց (Թրգմ. Օր. Մարիանէ Բասքալ), 1886, Բախտ (1887), Բնական պատմ., Գիտութիւն զԱստուծոյ (1888), **Ժամանակագր. պատմ. Երուսաղէմի** (Աստուածատուր եպսկ., 2 հատոր), Հրաւիրակ Երկրին Աւետեաց (Խրիմեան, Բ. տիպ) 1892, Ժամագիրք (1895, իսկ 1903 ին՝ ծոցակիր), **Համաբարբառ Ս. Գրոց** (Թ. Վ. Եկաւեան) 1895, Ճանապարհ երկնից (Գ. տիպ) 1897, **Բաղդատութիւն** տպագիր Ոսկրանի և Երուսաղէմի ձեռագրին (1898), Աւետարան առենի, Ժամագիրք առենի (1899), **Եփրեմ Խուրի**, Մաշտոց, Պատմ. Ս. Լուսաւորչի (Պաղտասար դպիր՝ տաճկերէն) 1901, Վարժութիւն փոխասաց մանկանց (1903), Գովասանք (հայ-տաճկ.) 1906, **Ցուցակ** գրոց տպագրելոց ի տպ. Ս. Աթոռոյս Յակոբեանց [որմէ պատրաստած ենք մեր ցանկը՝ շատ մը նորերու և հիներու յաւելմամբ] **1907**, **Ներածութիւն** յայտնութեան գրոց հին հայ թարգմանութեան (Ֆր. Մուրատ), Երկու ոտաններ (1911), Զայնքաղ շարական (վերջին տիպ՝ ընդ մամլով), Ս. Յակոբ նամ 2 առաքելալարըն նագլի (Բ. տիպ, Ա.ն ի Պոլիս) 1912: — Ասոնցմէ զատ առանց թուականի կան հետեւեալները. — Խորհրդածութիւն ի վերայ չարչարանաց Քս.ի, Կեանքէ առնուած պատմութիւններ, Կիպրիանոս, Կիւրակէ, **Յայտնութիւն Յովհաննու** (բաղդատական ուսումնասիրութիւն, Պ. Ֆ. Մուրատեանի), **Պատմ. Երուսաղէմի** (Խ. Վ. Մխիթարեան), Տաղարան, Տարերք ընթերցանութեան, Քահանայարան: — Տպարանապետ՝ Գէորգ Վրդ. որ այս տարի Յուլիսին Պոլիս եկաւ՝ բողոքելու իր պաշտօնանկութեան մասին, «Ս. Գրքի մեկնաբանութեան» տպագրութեան առթիւ ծագում առած խնդիրի մը:

207ա. **Աբրահամ Մուրատեան** ✦ — Ծնած է 21 Հոկտ. 1833 ին Արմաշ՝ ուր ուսուցիչ էր հայրը (Հալէպցի Տիգեանց Մուրատ վրժպտ.): Նխն. կրթ. ստացած է հոն: — 1844 ին ընտանեօք Երուսաղէմ ուխտի երթալնուն, Աբրահամ Ս. Աթոռ.ի տպարանը կ'այցելէ, և անհուն սէր մը կ'արծարծի իր մէջ՝ այդ արհեստին մասին: Նուէր ստացած ափ մը տառերով կը շարէ «Հայր-մեր»ը զոր իր իսկ ձեռքով կը տպագրէ: Հոն կարելի եղածին չափ իր պէտքերը Հրէի մը տպարանէն հոգալով և պակաս տառերն ալ տօսախի վրայ հօրը փորագրել տալով՝ կ'սկսի աղօթագիրքի մը պատրաստութեան զոր կ'աջողի գլուխ հանել, յետոյ Այրբենարան մըն